# ԱՆԻԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

—

Պասճէն

Թիւ 25 Պատասխանեցի Հոկտ. 16-ին

Մեծապատիւ պարոն Աբիսողոմ Յովհաննէսեանց

Ձեր Սեպտեմբեր 14-թուով նամակն ստացեր եմ։ Այդ նամակաւ դուք Անւոյ նախկին Հոգաբարձուներէ՝ տէրն Մինաս քահանային, Մ. Գէորգ աղայ Բաբախանցի, պարոն Յարութիւն Յովհանջանեանցի եւ պարոն Հաճիպապ Իսպիրեանցի կրկին գործելու պատրաստականութիւնները յայտնելով 'ի միասին, յաւելցուցեր էիք նաեւ նոցա վերայ իբրեւ նոր անդամ պարոն Ասատուր Խաչակեանց եւ ուստայ Մանուկ Խումարեանց, ընդ նոսին եւ Ձեր պատրաստակամ յօժարութեան անդամակցութեամբ նոցա հետ գործելու մասին։

Այդ երեք նոր անդամոց մասնակցութիւն եւ հինները կրկին գործելու յօժարութիւն ինձ եւս հաճանելի լինելով, կը գրեմ անմիջապէս Վեհ. Հայրապետին, որ շնորհ անէ իւր օրհնութեան կոնդակով հաստատել զանոնք։

Յետ այսորիկ ես եւս կը խնդրեմ հոգաբարձութեան պատուելի անդամներիցդ, որ այդ գործում մեր անդամոցդ հետ որպէս յարաբերութիւն ունենալու մի ծրագիր ուղղէք մեզ անդամոյդ ստորագրութեամբ։

Երկրորդ՝ երբ Հոգաբարձութիւնդ ձեռնարկութիւն կանէ Անւոյ Մայր-եկեղեցւոյ վերաշինութեան մասին գործի սկսել, թող հոգ տանի անպատճառ իւր գործառնութեանց համար արձանագրութեան մատեաններ ունենալ, նոյնպէս եւ հաշուոց համար։

Եւ ես իմ կողմանէ ժողովոյդ իբրեւ նախագահ կանուանեմ Արժանապատիւ տէրն Մինաս քահանային։

Իսկ Ներսէս վ. Տիգրանեան, որոյ մասին կառաջարկէք առ ժամանակեայ Անւոյ շէնքերու մէջ դնել պահպանելու համար, եւ նորան մի հրամանագիր տալ շրջակայ գիւղերից ժողովարարութիւններ անելու, այդ մասին կը պատասխանեմ որ, մեք անցեալներ վեց ամսոյ չափ Խօշավանքի մէջ փոխ-վանահայրութեան պաշտօն յանձնած լինելով նորան, հետեւեալ խարդախութիւններն նկատեցինք նորա վերայ.

ա. Նա իւր այս միջոցի գործառնութեանց երկու տոմարներ յանձնուած է մեզ, որոց մէկի մէջ գրած է թէ՝ մի բուրվառ առի 4 ր. իսկ իսկ միւսի մէջ թէ՝ առի 6 ր.

digitised by A.R.A.R.@

բ. Տօմարներից միոյ մէջ գրած է՝ առի մի փէշ, իսկ երկրորդի մէջ առի երկու փէշ.

գ. Մի տօմարում գրել է մի ձեռք զգեստ առի 37 ր. » իսկ միւսի մէջ, առի 44 ր.

դ. Վանքի Տայլար անուն ագարակի երեխ 400 րուբլով 'ի վարձու տուել է, իսկ տօմարի մէջ 60 րուբլի նշանակած է. պատճառելով թէ՝ 40 րուբլին ուրիշ ծախս արած եմ

ե. Վանքի պօստանի տարեկան վարձկից 50 րուբլի առած է, իսկ տօմարում 20 րուբլի միայն գրել է, ասելով նոյնպէս թէ՝ 30 րուբլին ուրիշ ծախս արած է.

զ. Նա իւր պաշտօնավարութեան միջոցին վանքի մի ոսկեզօծ խաչ, Փէշտմալճեանի երկու հատոր բառարաններ եւ մի այնալի հրացան պակսեցուցեր է, եւ այլ պակասութիւններ է գործած.

Բաց յայտնանք եւ իւր պաշտօնավարութեան միջոցի ձմեռուայ համար ստանալեղինաց բոլոր պիտոյքներ հոգալուց զկնի, 18 լիտր եւս չէր դրեր էր վանքում, իսկ գարուն այնտեղ երթալով մի լիտր միայն գտայ, թէ ի՞նչպէս վատնուած, եւ ո՞ւր գնացեր են այս չիրեր ուրիշ նիւթեղինաց հետ՝ ցուցակը ունիմ մօտս, որ հարկ եղած ժամանակ կը ցուցանեմ ցանկացողներին։

Այս բաների պատճառով ես զինք իւր պաշտօնից դադարեցուցի, բայց եւ միանգամայն իւր վերայ գրութիւն ցուցանելով թողի վանքի մէջ, եւ պատուիրեցի որ միայն ժամասացութեամբ պարապի, եւ այնտեղ ապրի։ Ուստի ես իմ կողմանէ նորա վերայ հաւատարմութիւն չունիմ ոչ մի պաշտօնի դնելու, միայն ես նորան արժանի կ՚տեսնեմ որ Խօշա-վանքի մէջ մնայ եւ իւր ապրուստն անէ։ Իսկ Անւոյ շէնքերի պահպանութեան համար, եթէ ուրիշ յարմարաւոր մարդ կը գտնէք, առաջարկեցէք մեզ որ դնենք այնտեղ։

'Ի վերջոյ կ'խնդրեմ փութացուցանել նամակիս փոխադարձը, պատասխանելով նորան կէտ առ կէտ։

Գրիգորիս Ե. Կարուց

'ի 6-ն Հոկտեմբ'' 1880 ամի
'ի Կարս

---

(Կարուց Առաջնորդին)

Ձերդ բարձր Սրբազնութեան

Ստանալով գրածդ նամակը, կարգացի Հոգաբարձուաց. որոնք լսելով նորա մէջ գրուածները, յանձն են առնում հոգալ այդ բոլորի մասին,

digitised by A.R.A.R.@

նախագահ ընդունելով Արժանապատիւ Մինաս քհյ Տէր-Պետրոսեանցին։ Միեւնոյն ժամանակ Հոգաբարձութիւնս պատիւ ունի յայտնելու, որ իւր ձեռնարկութեանց համար կարեւոր գումարը ժողովարարութեամբ կարող է ձեռք բերել. իսկ նա լրագրութեան մէջ հրապարակ դուրս գալու այն ժամանակ միայն պէտք է վստահանայ, երբ ազգի վստահութիւնը եւ հաւատարմութիւնը լիապէս վայելել է, երբ Վեհ. Հայրապետից հոգաբարձութեան հաստատութեան կոնդակը ձեռին ունենայ, որը չուտափոյթ ստանալու յուսով է դեռ մնում Սրբազնութեանդ խոստման համաձայն։

Գալով Ներսէս վարդապետի մասին Ձեր գրուածներին, Հոգաբարձութիւնս այդ բոլորը 'ի նկատի առնելով՝ կարեւոր համարեց յիշեալ վարդապետից բացատրութիւն պահանջել։ Սոյնը կարեւոր եւ անհրաժեշտ է համարում մի վանահօր ներկայութք Անւոյ մէջ, թէ նոր շինութեան պաշտպանութեան, թէ իբրեւ Հոգ. իշխանութեան եւ Հոգաբարձութեան ներկայացուցիչ եկող գնացողների մօտ։ Բայց որովհետեւ Ձեր Սրբազնութիւնը այդպիսի մի անձ ցոյց չէք տուած Ձեր նամակում, ուստի՝ խնդրում ենք՝ ներողամիտ լինել Ներսէս վարդապետի աննշան թերութեանց եւ իրաւունք տալ նրան, ինչպէս անցեալ թղթով խնդրած էինք, միանգամայն խստիւ պահանջելով իւր վերաբերեալ հաշիւները ճիշտ պահել։ Հոգաբարձութիւնս յոյս ունի որ, Սրբազնութիւնդ գործի կարեւորութիւնը 'ի նկատի առնելով, կը կարգադրէ ըստ վերոյիշելոյն, որ չը լինի թէ եղածն էլ անտէր մնալուց քանդուի եւ պատասխանատուութիւնը բոլոր մասնակցողների վրայ ծանրանայ։

16-ին Հոկտ. 1880 ամի։

—

Թիւ 26 Պասճէն

Մեծապատիւ Վարդապետն Աբիսողոմ Յօհաննէսեանց

Ընդունելով Ձեր 'ի 16-ն ամսոյս գրած նամակը, կպատասխանեմ. Տիգրանեան Ներսէս վ.ի նկատմամբ գրածդ յօդուածին միայն։ Ես ներողամիտ կը լինիմ յիշեալ Ներսէս վ-ին այնչափ ժամանակ միայն՝ քանի որ նա իւր սովորական գայթակղեցուցիչ միջոցները 'ի գործ չ'դնէր։

Գալով Ձեր ըսած, «աննշան թերութեանց» մասին կ'պատասխանեմ,

digitised by A.R.A.R.@

ես այդ աննշանները՝ աննշան չեմ համարեր, զի քանի մը ամսուայ Նորա պաշտօնավարութեան միջոցի 300 (երեք հարիւր) ռուբլի ծախուց մէջ՝ յիսունէն հարիւր ռուբլի նենգութիւնները աննշան չեն։ Ես կ'ցանկայի որ դուք եւս իմ բռնած դրութեան համաձայնելով՝ զինք (Ներսէս վ.) յուղղութեան վերածէիք սանձահարելով Նորա մոլորութիւնները որ չ'քաջալերուէր։ 'Ի դիպող ժամանակի՝ Ձեզ հասկ'ցնելու զանի կ'խօսիմ այս մասին։

Մի՞թէ ես Նորան բարի չէի կամենար, այն ինչ չորս տարուայ չափ զինք պաշտպանեցի՝ իւր վտարվեր միաբանակցի հարուածներէն՝ երկու չարեաց փոքրագոյն համարելով, մի՞թէ Նա մոռացած է իւր ինձ գրած նամակները։

Անւոյ մէջ եղած նոր շինութիւններ « անտէր լինելուց քանդուի եւ պատասխանատուութիւն բոլոր մասնակցողների վրայ ծանրանայ » սպառնացող խօսքերու ազդեցութիւն 'ի գործ դնելու հարկ չկար, քանի որ ես Ներսէս վ. յուղղութեան ածելու կաշխատէի։ Այո՛ թող երթայ Ներսէս վարդապետն Անւոյ շինութեանց պաշտպանութիւն ընելու, բայց կ'խնդրեմ, որ զգուշացնէք այդ քողաւորեալ աղաչաւորն որ իւր կոչման եւ անուան արժանավայել կերպով կենցաղավարուի, որպէս զի թէ իրեն եւ թէ մեզ ամենուս պատիւ բերէ։

Անւոյ ներքեւ ձորի մէջը մի աչք ջրաղաց կ'ծախուի Անի գիւղացի Թուրքէ մը ձեռօք չորս հարիւր ռուբլիի Նորա ներքեւ երկու աչք ջրաղացի տեղ եւս կայ շինելու, եթէ առնք առնելու լինինք։ Անւո մէջ կազմուելիք միաբանութեան հացի խնդիր կ'լուծուի։ Այս մասին շուտով հոգալու եմք, քանի որ ձեռքէ չ'գնացեր։

Ներսէս վարդապետն երբ միջոց կը գտնայ թող գայ ի Կարս՝ պէտք եղած հրահանգներու եւ պատուէրներու, հետ տանէ եւ յանձնարարական նամակն։

Գրիգորիս Ե: Կարսւց

24 Հոկ'' 1880 ամի
'ի Կարս

—

Արձանագրութիւն առաջին

1880 ամի 16-ն Նոյեմբերի Ներքոյստորագրեալները պատիւ ունեցան տեսնալու Կարսայ Սրբազան Առաջնորդ Գրիգոր Եպիսկոպոս Աղուանեանից հետեւեալ գրութիւնը։

digitised by A.R.A.R.@

Թիւ 28

Առ պատուարժան Անդամս Հոգաբարձական Ժողովոյ Անւոյ

Ըստ մեր պարտաւորութեան եւ խոստման, մեք տարւոյս Հոկտեմբեր 26 թուականաւ եւ 107 թուահամար նամակաւ խնդրեցինք Նորին Օծելութեան՝ Տեառն Գէորգ Դ. Վեհափառ Կաթուղիկոսէն Ամ Հայոց, որ շնորհ անէ իւր օրհնութեան (իւր օրհնական) կոնդակով հաստատել զՁեզ 'ի պաշտօն Հոգաբարձական Ժողովոյն Անւոյ եւ բաղդ ունեցանք 'ի մօտ աւուրս ստանալ զայն

Նոյն Կոնդակը առա ընդ գրոյս առաքելով առ Ձեզ, կը յորդորեմք զՁեզ, որ ջան 'ի գործ լինիք այսուհետեւ Վեհափառ Հայրապետի եւ համայն ազգի բաղձանքը 'ի կատար հանելու ձեռնարկութեանցն սկսել շուտափոյթ կերպով, որով թէ անմահացուցած կը լինիք Ձեր յիշատակը եւ թէ կ'պսակէք մի ազգի գեղեցիկ ցանկութիւն

Ձեր գործառնութեանց յաջողութեան միշտ բարեմաղթող

Գրիգորիս Եպիսկոպոս Կարուց

1880 Նոյեմբեր 14
յառաջնորդարան Հայոց
'ի ք. Կարս

Նորընտիր Հոգաբարձութեան անդամները ընդունելով Վեհափառ Հայրապետի կոնդակը, որոշեցին՝ կատարել Նորին Օծութեան, նաեւ Գերապատիւ Կարսայ Առաջնորդի նոցա վրայ դրած պարտականութիւնը օրինաւոահման գրագրական պաշտօնավարութեամբ եւ նպատակին վերաբերեալ կարեւոր համկացողութեամբ (Անիի մէջ ա) հաստատելու կանոնաւոր միաբանութիւն հսկող եւ պահպանող եկեղեցեաց եւ աւերակաց. Նաեւ որոշեցին Վեհ. Հայրապետի Կոնդակը պահել հոգաբարձական փողանոյ մէջ, կցելով այս առաջին արձանագրութեան հետ

digitised by A.R.A.R.@